



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԵՄԲԱԳԻՐ

ՋԱՐԾԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 26

“ՏԱՃԱՐ,” Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց համար տարեկան	40 »
Արսասանմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Ջարմայր Քահանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեչիքաւ, Հայոց եկեղեցի

درسماعنده بشکطاشده ارمی کلیسائنده (داجار) غزتیسی مدیری باباس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Ջարմաքճըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ԽԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբիս Բնյ. Պալլաճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍՍԵՆԴՐԻԱ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաթիթեան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱՔԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Ծ.
Վրդ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ.
Վրդ. Աղաւնուհի
ԵԴԵՍՈՒԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕԶՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ԶՄԻԻՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգիսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ.
Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ.
Սաւաթէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թորատլեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գասպարեան
ՄԱՆՉԷՍԹԵՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐՍԵ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բազարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ.
Տատեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէնեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԼԻՔԻՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Ծ. Վրդ. Մազլումեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻՋԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊԷՅՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եզե-
կիէլ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒԹ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՏԱՍԹՕ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թող Ա. Բնյ. Թաղմեան
ՍԱՄՍՕՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապալեան
ՍԵՐԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէդ-
եան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօվ-
լէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՋ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմա-
պուհ Բնյ. Քիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մա-
նիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 26

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Յիսուս Նային քաղաքին մէջ, ՂԵՒՈՆԴ Ս. Վ. ԴՈՒՐԵԱՆ. — Վերանորոգու-
ած Նայ Եկեղեցւոյ, (Ի. Յօդուած, Շաբ.) ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՍԼԱՆԵԱՆ. — ԿՐՕՆԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ,
Ստեփանոս Սիւնեցի, (Շաբ.) ԵՂԻՇԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ. — Տ. Բարգէն եպս. Կիւլէսէրիան (Կենսա-
գրական նօթեր, ԽՄԲ. — Նախնական միտքը ղէպի փոխստփայլութիւն, ՎԱԶԱՆ ԽԻՒՏԱՎԷՐՏԵԱՆ. —
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ, Շաբթուան յուրեր եւ ժողովոց որոշումներ:

ՅԻՍՈՒՍ ՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ

Նայիւն. — Յուդաիստութիւն. — Այրի կնոջ միա-
մօտ զաւկին յարութիւնը. — Յովնանէս Մկրտչի
դրկած պատգամաւորները. — Յովնանէս Մր-
կտչի կասկածը. — Իմացպէս կարելի է թա-
ցատել այս պատգամը. — Մաթեոսի բան-
օր. — Աստուծոյ դրկած փորձանքները. —
Քրիստոսի պատգամները. — Յովնան-
էս Մկրտչի մասին քրատ գովեստը.
— Փոքր խաչապատկան մեջ. Ղուկ.
է. 11—35. Մատթ. ԺԱ. 2—9.)

Յիսուս Կաթառնաում քաղաքէն ելլե-
լով Նային քաղաքը ուղեց երթալ (Ղուկ.
է. 11): Նային՝ Թաբոր լեռան գագաթին
դիմաց բլուրներու վրայ գեղարուեստա-
կան ճաշակով շինուած գեղեցիկ քաղաք
մըն էր. գեղեցիկ դիրքին եւ վայելչու-
թեանը համար «Նային» կոչուած է, որ կը
նշանակէ «գեղեցիկ». այժմ թէեւ անունը
կայ ու կը մնայ թեթեւ փոփոխմամբ —
Նեիւն — սակայն կեղտոտ եւ թշուառ փոքր
գիւղ մը դարձած է. գերեզմաններէն զատ

հինէն բան մը չէ մնացած. գերեզմաններէն
շատերը կը տեսնուին տակաւին փորուած
ապառաժներու մէջ գիւղին արեւելեան եւ
արեւմտեան կողմը միանգամայն:

Յիսուս արեւելքի ճամբորդներու պէս
առտուն կանուխ ճամբայ ելաւ Կաթառ-
նաումէն դէպի Նային: Կաթառնաումէն
Նային 25 մղոն ճանապարհ մը կայ զոր 6—7
ժամէն կարելի է կտրել: Յիսուս հաւանա-
կան է որ Տիրեւրիական ծովէն նաւով ան-
ցաւ եւ ցամաք ելաւ ծովուն հարաւային
կողմը, ուրկէ շատ աւելի դիւրին էր Նա-
յին երթալ, եւ կէս օրէն մէկ երկու ժամ
ետք ապահովաբար հասնիլ Նային:

Յիսուսի ուղեկից էին ոչ միայն իր աշա-
կերտաց խմբակը, այլ նաեւ հրճուող եւ
զինքը աստուածացնող ժողովրդեան բազ-
մութիւնը: Երբ մեծ յոյսերով լցուած հր-
ճուող ժողովուրդը լեռնոտ ճամբաներէն
անցնելով մօտեցաւ Նային քաղաքին, տը-
խուր եւ շատ տխուր յուզարկաւորութեան
մը հանդիպեցաւ: Քաղաքի դռնէն դուրս
կը հանէին մեռել մը եւ թաղելու կը տա-

նէին. այս տեսարանը սովորական նման տեսարաններէն աւելի վշտալի էր. մեռելը պատանիի մը մեռելն էր. պատանին «միա- մօր էր» և մայրն ուրեւայրի. այս երկու պարագան կը ցուցնեն մօրը կորստեան մեծութիւնը և դառնակսկիծ ցաւը:

Յիսուս դաճաղին մօտ տեսաւ ար- ցունքներ թափող մօր դառնաղէտ վիշտը. այս պարագան Փրկչի զգայուն սրտին վրայ խոր ազդեց. խղճաց անոր անբախտ վի- ճակին վրայ և աստուածային ձայնին շնչ- տովը ըսաւ անոր «մի լար» . դաճաղին մօտեցաւ և ծիսական սովորութեան վրայ առանց ուշադրութիւն դարձնելու, ձեռքը դաճաղին մօտեցուց ու մեռելին վրայ դրաւ. կրնաք երեւակայել դաճաղակիրներու և յուզարկաւորաց շփոթեալ ու տարօրինակ վիճակը. ամէնքն ալ կանգ առած էին ու կը նայէին Փրկչին ընկիւթին. լուռ հանդի- սական յուզարկաւորներու և իրեն հետե-ւող բաղմութեան չըջապատող ամբոխին մէջէն Յիսուսի քնքոյշ ձայնը լսուեցաւ. «Ով պատանի, քեզի կ'ըսեմ, ելի՛ր»: Ու մեռելը իսկոյն ելաւ, նստաւ և սկսաւ խօ-սիլ. մարդու մը ձայնէն ինչպէս որ քնա- ցող մը քունէն կ'արթնայ, այնպէս ալ միայն Գրիստոսի ձայնովը մեռելը մահուան քունէն արթնցաւ, յարութիւն առաւ, և Յիսուս զանիկա իր մօր յանձնեց:

Այն անհաւատներն որ կ'ըսեն թէ պա- տանին չէր մեռած, բան մը չհաճ չին կրնար ըլլալ. վառն դի ուրանալով Գրիս- տոսի ամենազօր կարողութիւնը, անուղ- ղակի կերպով հաստատած կ'ըլլան անոր ամենատես գիտութիւնը: Վառն զի պահ մը անհաւատից նման եթէ ենթադրենք որ մեռած կարծուած պատանին ողջ ըլլար դաճաղին մէջ, Յիսուս չէր կրնար կանխաւ գիտցած ըլլալ պատանիին ողջ ըլլալը. քանի որ պարզ հանդիպում մըն էր այս յուզարկաւորութիւնը. և քանի որ առանց կանխաւ տեսած ըլլալու գիտակ կ'ըլլայ պատանիին ողջ ըլլալուն՝ ապա ուրեմն ամենագէտ է Յիսուս: Ամէն պարագայի մէջ եթէ անհաւատից հետ ուրանանք պա- տանիին մեռած ըլլալը, պէտք է ընդու- նինք որ Յիսուս ամենագէտ է, և եթէ

ընդունինք մեռած ըլլալը պէտք է որ հա-ւատանք ամենազօրութիւնը:

Խոնուած ժողովրդեան մէջ ծայրայեղ հիացում և սքանչացում, ինչպէս և եր-կիւղ տիրեց այս մեծաքանչ հրաշքին հե-տեւանօք: Ժողովուրդը լսած և կարգա- ցած էր Եղիայի ձեռամբ Սարեփթացի այրի կնոջ, ինչպէս և Եղիսէի ձեռամբ Սունա- մացի կնոջ որդւոյն յարութիւն առնելը. կարգացած էր և կը յիշէր թէ Եղիա և Եղիսէ քիւմար զաւակներուն ինչպէս յա-րութիւն տուին: Անոնք այս բաները ջեր-մեռանդ ազօթքով և կարգ մը արտաքին շարժումներով կատարած էին: Եղիա ստիպ-ուեցաւ Սարեփթայի այրի կնոջ զաւակը յարուցանելու համար իր անձը տարածել մանուկին մարմնոյն վրայ, և տիրոջ աղա-ղակելով միայն կրցաւ վերակենդանացնել մանչը: Եղիսէ Սունամացի այրի կնոջ միա-մօր մեռեալ զաւակը յարուցանելու համար Աստուծոյ ազօթք ըրած, կնոջ զաւակին վրայ պառկած, և այդ կերպով տղան կենդա-նացուցած էր: Ժողովուրդը դիւրաւ կը յաղդատէր թէ այս մարգարէներունը ար-տաքին զօրութեամբ, Աստուածային զօ-րութեան օժանդակութեամբ եղած էր, մինչդեռ Յիսուս իր իսկ զօրութեամբ իր իշխանութեամբ յարուցած էր:

Յիսուս արդարեւ այս հրաշքը հանգիստ, րոպէական, իր սեփական անունով, իր սե-փական իշխանութեամբ, իր խօսքով, իր զօրութեամբ կատարեց: Ժողովուրդը Ե-ղիայի և Եղիսէի հրաշքները միտք բերելով և բաղդատութեան դնելով Փրկչին իրեն սեփական զօրութեամբ ըրած մեծաքանչ հրաշքին հետ բնական էր որ պիտի փա-ռաւորէր զԱստուած ըսելով. «Մեծ մարգարէ մը եղեր է մեր մէջը, և Աստուած իր ժողովուրդին այցելութիւն ըրաւ»:

Այս մեծ հրաշքին համբաւը անցաւ Գա-լիլիայի սահմանը, Հրէաստանի և բոլոր չըջակայ տեղերուն մէջ. մանաւանդ հասաւ մինչև իսկ Յովհաննէս Մկրտչի ակունջը որ Մաքբերոսի բերդին մէջ բանտարկուած կը մնար յուսահատ: Հստ վկայութեան Յով-սեպոս Փլաւիոս Հրեայ պատմիչին, Մա-քբերոս բերդը Մեռեալ ծովուն արեւելեան

կողմը կը գտնուէր և Երուսաղէմէն ետքը Պաղեստինի ամենէն ամուր բերդն էր :

Յովհաննէս Մկրտիչ այս լուրը առածին պէս, յատուկ պատգամաւորութիւն մը ղրկեց Քրիստոսի (Մատթ. ԺԱ. 2) . այդ պատգամաւորները իրեն երկու աշակերտներն էին, ընկճուած, տրտում ու տխուր անապատականներ, որոնք յուզուած և յուսահատած Յովհաննէսի կողմէն եկած էին հարցնելու Յիսուսի թէ «Դու ա՛ն ես որ պիտի գայիր, թէ ոչ ուրիշի մը սպասենք» :

Յովհաննէս որ վկայած էր երբեմն Յիսուսի համար թէ «Ահա՛ Գառն Աստուծոյ», ինք որ բացուած երկինքը հրճուանքով տեսած էր, և Ս. Հոգւոյն աղանաւկերպ իջումը Քրիստոսի մկրտուած ատեն տեսած էր, ի՞նչպէս կ'ըլլար որ այժմ պատգամաւորութիւն կը ղրկէր հասկնալու համար թէ ա՛ն էր ակնկալուած Փրկիչը թէ ուրիշի մ'սպասէր :

Մեկնաբաններ երեք գլխաւոր կարծիք կը յայտնեն այս պատգամաւորութեան ղըրկուելուն մասին : Ոմանք կը կարծեն որ Յովհաննէս այս պատգամաւորները ղրկեց, համոզելու համար զանոնք թէ Յիսուս արդարեւ իսկ և իսկ իր վկայած Քրիստոսն էր, և այս կերպով փարատելու իր վշտացեալ աշակերտներու կասկածը . այլք կը կարծեն որ պատգամաւորները ղրկեց ինք համոզուելու համար Յիսուսի Մեսիան ըլլալուն . վասն զի Յովհաննէս հաւատքը տկարացած էր իր երկարատե քանտարկութեամբ, և ցաւած էր Յիսուսի դէմ որ իր սիրելի ընկերոջ մասին ոչ մի օգուտ ընծայած չէր բանտարկութեան միջոցին, և չէր յայտնած իր աստուածային գերահրաշ զօրութիւնը յօգուտ իրեն, Ուրիշներ ալ կը կարծեն թէ պատգամաւորները ղրկեց Քրիստոսի, որպէս զի ստիպուի յայտնապէս իր աստուածային անձը յայտնելու աշակերտաց, և յայտարարելու իր իսկ բերնով թէ ինքն էր խոստացեալ Մեսիան :

Այս երեք կարծիքներէն հաւանականագոյնը երկրորդն է . երբեք ստուեր կամ արար բերած չենք ըլլար Յովհաննէս Մըկրտիչ անուան և գիրքին, եթէ յայտնապէս ըսենք թէ Յովհաննէս իր բանտար-

կութեան հետեանօք Քրիստոսի մասին պահ մը տարակուսած և կասկածած էր : Բնական չէ՞ր այդ տարակուսանքը . գիտենք թէ փորձութեան, վհատութեան, տկարութեան և հալածանաց ժամանակ ամենէն զօրաւոր կամքի տէր մարդիկ երբեմն կը տարակուսին այն բաներուն վրայ որոնց մասին կատարեալ հաւատք ու համոզում ունէին ի սկզբան . վհատութեան այսպիսի զօրեղ և ճնշող վայրկեաններ իրմէն առաջ ալ եղած են ուրիշ մեծ մարդոց, և մինչև անգամ Մովսէսի և Նդիայի կեանքին մէջ . բայց այս դէպքին մէջ Յովհաննէսի վիճակը անոնց վիճակէն աւելի տխուր և դառնագին է . բերդի մէջ բանտարկեալի մը վիճակը խիստ անտանելի էր : Արեւելքի բերդերու և ամրոցներու մասին եթէ ուզենք մօտէն տեղեկանալ կրնանք հասկնալ թէ անոնց մէջ ի՞նչպիսի անտանելի էր բանտարկուածին կացութիւնը : Այնտեղ յաճախ կ'ենթարկուի բանտարկեալը դաժանակիր չարչարանքներու, ամէն օր մահն աչքի առջև ունենալով : Մարդկային պատմութեան մէջ շատ օրինակներ կը տեսնենք, ուր մեծ, անվեհեր մարդիկ այսպիսի բանտարկութեան մէջ գտնուելով ի վերջոյ խուլած, յուսահատած են . երբ հերոսական անձնագործութեան զգացուիլը կը պաղի, երբ երկաթեայ համբերութիւնը բռնադատուած անգործութենէն և յիմարեցնող միակուլութենէն կը պալթի, երբ հպարտ հոգին մարմնական անգործութեամբ և յուսահատութեամբ կը խորտակուի և ամբողջ կեանքը մտալ բերդի մէջ վատութեան մատնուած է, այն ժամանակ միթէ կարելի է այսպիսի հանգամանքներու մէջ գտնուող մարդը մեղադրել, եթէ նա կասկածի, յուսահատի և տարակուսի :

ՂԵՒՈՆԴ Ս. ՎՐԴ. ԴՈՒՐԵԱՆ
(Մնացեալը յաջորդով)

Հետեւողութեամբ
ՀԱՅՐ ՖԱՐՐԱՐԻ (*)

(*) Հայր Յարութ, Անգղիացի նշանաւոր ֆուդիշը, երկու օտի առաջ վախճանեցաւ : Անգլիոյ նախկին Վիքտորիա քագուհւոյն խոստովանեալն էր . կը պատմուի քի Հայր Յարութ քագուհին խոստովանուցած ասեւ հարցուցիւր ի քի «Երբ Քրիստոս իր երկնային փառոյ յանկարծ երեւի աշխարհիս վրայ, ի՞նչ վայելուչ կը ծննկ ընէր.» Թագուհին պատասխանեւ ի. «Իմ իշխանական քագս անոր սրբափայլ ոսկերուն ճակ կը կը դնէր.» — Հայր Յարութի գործերէն նշանաւորագոյններն են իր «Յիսուսի Կեանքը» եւ «Քաւրոցները» :

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԶՈՐՐՈՐԴ ՅՕԴՈՒԱՄ

Ժամերգութիւն Հայ Եկեղեցւոյ կամ
Բնակութիւն Ժամագրքին

Զ. (*)

Կիրակի օրերու ժամերգութեանց մէջ կանոնադրուիլէն վերջը սահմանուած է «Հանգստեան» շարական ըսելը: Կը մտածեմ թէ կարելի է ամբողջապէս դադրեցնել զայն.— 1. Վասնզի ամեն շաբթու մէջ ուրբաթ օրերը կանոնաւորապէս կ'երգուին հանգստեան շարականները, և կիրակի օրերու արդէն իսկ երկարատեւ ժամերգութիւնը հարկ չկար ծանրաբեռնելու: — 2. Վասն զի Ս. Պատարագի Խորհրդոյն մէջ քահանան արդէն իսկ մաղթանքներ ունի վասն ննջեցելոց, և դպիրներ ի դէմս Ս. Հոգւոյն կ'աղօթեն վասն ննջեցելոց: — 3. Այդ հաստատուն կարգադրութենէն զատ կան նաև շատ անգամներ կրկնուող պարագաներ: Տարիին մէջ կիրակի կը պատահի որ ըստ Տօնացոյցին հանգստեան զատ կարգ մը իր Աւետարանով կը կարդացուի սկզբնական «հանգստեան»էն զատ, ու երբ խնդրանք մ'ալ կեցած ըլլայ, անգամ մ'ալ Պատարագին մէջ, որով երեք անգամներ ըսուած կ'ըլլայ:

Իսկ շատ կիրակիներ յատուկ խնդրանքով կ'ըսուի, և հետեւաբար 2 անգամներ գրեթէ միշտ հանգստեան կարգ կը կատարուի: Մեր առաջարկը շատ նպատարամար կը թուի. քանի որ ննջեցելոց աղօթքը անփոփոխելի կերպով կայ. կըրկնուին է որ պէտք է յապաւել: Բանի որ յատուկ օր մը կայ այդ կարգադրութեանը, կիրակին խնայուած կ'ըլլայ: Շատ անգամներ խնդրանք կեցած ըլլալուն կրկնուիլ կը դադրի: Միակ առարկութիւն մը պիտի ըլլար ինծի թէ Ս. Հոգւոյն շարականի

մասը չունին Աւագ Օրհնութիւնները, սակայն կարելի է զայդ ուղղակի ներմուծել առանց իր հետագայ յաւելումական մասերուն. որով առարկութեան պատասխանը ամենէն համառօտ ձեւին մէջ դրուած կ'ըլլայ:

Կիրակի օրերու համար սովորութիւն եղած է քարոզները եղանակով երգել, ու շատ եկեղեցիներու մէջ այնքան կը ծեփծեփուի «Արի» մեներգէն առաջ ըսուող քարոզը, որ կէս ժամ կը տանի. բոլոր քարոզները պարզ կարդալ հարկ կը սեպեմ: Պէտք է դադրի նաև Ս. Գրքի մարգարէական ընթերցումները եղանակով արտասանելը, ինչպէս նաև Ս. Աւետարանին երգելով ընթերցումը, Հանգանակին ալ գեղգեղանքով կարդացուիլը: Ատոնք շատ ինչ պիտի պակսեցնեն կիրակի օրերու ժամերգութեանց երկարաձգութիւնէն:

Է.

Շատ գեղեցիկ կարգադրութիւն մ'է այն բաժանումը որով ուտիքի, պահքի օրերու և կիրակիի ժամերգութիւնները տարբեր են. փոփոխուած ձեւերը միշտ լարուած կը պահեն ժողովրդի ուշադրութիւնը: Ծնորհալիի ժամանակ կիրակի օրերը միայն կ'երգուէր «Մեծացուցէ» շարականը, լուր օրերը չկար այն. հետեւապէս յետսամուտ սովորութիւն մ'է այն:

Ապաշխարանաց «Թագաւոր յաւիտեան»ները սքանչելի են իրենց կազմին պարզութեանը և իմաստներուն վսեմութեանը կողմանէ, և զրկանք մը պիտի ըլլար անոնց չերգուիլը:

«Ալէլուիա»ներ որոնք Տէրունի օրերուն են՝ սքանչելի են ամէն կերպով, շատ յարմար ընտրուած սաղմոսարանէն:

Սրբոց տօնի օրերուն «Թագաւոր յաւիտեան»ներու կազմութիւնը երկու կերպ ունի. մեծ մասը գեղեցիկ են. իսկ շատ փոքր մաս մը թերի կը թուի ինծի, և որուն մասին թուիքներս պիտի յայտնեմ քիչ մը վարը:

Ժամերգութեան առաւօտեան մասին մէջ, երից մանկանց օրհներգը շատ երկար դրուած է, և շատ հազուադէպ են ա՛յն

(*) Շար. 25րդ թիւէն:

եկեղեցիները ուր լման կարդան զայն . չէ՞ր ըլլար արդեօք նշանակել 6 տուն օրհներգը որ կը սկսի «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց» բառերով, և լման ըսելէ վերջը սկսիլ Հարցի շարականը :

Մեծացուցէն առանց Զաքարիայի օրհներգին նպատակայարմար կ'ըլլար կը կարծեմ, քանի որ զարդի համար նշանակուած կը տեսնեմ . ամենէն խիստ եղող Սեբաստիայի եկեղեցին ալ լման չէր կարդար ինչպէս կը յիշեմ : «Ողորմեա» սաղմոսը նշանակուած ու չի կարդացուիր լման գոնէ իմ պատած գաւառներու մէջ . երբ ընդունենք թէ օրը մէկ անգամ գէթ պիտի ըսուէր այդ սաղմոսը՝ շատ պատշաճ էր ճիշդ շարականին քովը լման ըսելը :

Տէր յերկնաց շարականին սկիզբը ըստուղ սաղմոսին առաջին քանի մը հատուածները նշանակելը բաւական էր, քանի որ մի միակ տունը կը կարդացուի շատ եկեղեցիներու մէջ . կարճ ըլլար և լման կարդացուէր՝ ատիկա պատշաճ կը սեպէի : «Փառք ի բարձունս»-ի երգուիլը միահամուռ բոլոր ժողովրդով, աւելի վեհ դիրք մը պիտի տար այդ երգեցողութեան : Կամայականութիւնը հող ալ ունի իր աւերումները : Անձեւացին իր ժամանակակիցներէն կը գանգատէր թէ լաւ չեն երգեր, մինք ալ մէկ մասը ծանր միւս մասը արշաւասոյր կ'երգենք : Խիստ որոշում մը և խստագոյն գործադրութիւն մը յանձնարարելի էր : Շատ դիւրին է արդէն ենթադրել թէ կրկնումներու յապաւումի սկզբունքը եթէ որդեգրուէր, կիրակի առաւօտի «Ասացուք» քարոզը կը յապաւուէր, քանի որ երեկոյին կար, որով կիրակի առաւօտեան ժամերգութիւնը խրճողումէ զերծ կը մնար, թէև ամէն մաղթ թանք ու քարոզ նոյն օրուան մէջ ըսուած կ'ըլլար :

Ը.

Ժամերգութեանց Մաղթանքներու, Քարոզներու, «Թագաւոր Յաւիտեան»-ներու մէջ առ Աստուած փառաբանութիւններէ և գոհութիւններէ զատ շատ մը գեղեցիկ խնդրանքներ նշանակուած են, և երբեմն երբեմն կը տեսնենք որ եկեղեցին հան-

գուցեալ Սրբոց բարեխօսութեան կոչում կ'ընէ : Սրբոց բարեխօսութեան խնդիրը ահագին պայքարի նիւթ եղած է չորս դարերէ ի վեր Քրիստոնեայ եկեղեցիներու մէջ : Բողոքական և Կաթոլիկ եկեղեցիները ի մասնաւորի սաստիկ դառնութեամբ պայքարած են այդ մասին, և խնդիրը իր սուր հանգամանքը կորսնցնելու բնաւ երեւոյթ չի ցուցներ : Ամերիկեան միսիոնարութիւնը որ փրօփականդ ըրաւ ըրաւ Հայ եկեղեցիին մէջ, մեր Ս. եկեղեցիին դէմ ալ լարեց միեւնոյն պատճառաբանութիւնները ինչ որ Կաթոլիկ եկեղեցիին դէմ սարքած էր : Անիկա չնչմարեց կամ չուղեց նշմարել Հայ եկեղեցիին ու Կաթոլիկ եկեղեցիին ըմբռնումներուն մէջ գտնուած ահագին տարբերութիւնները . սկիզբի օրերուն ան չվարանեցաւ կռապաշտակաւ իսկ անուանելու Հայ ծէսը :

Յարձակումը ծանր էր, ինքնապաշտպանութիւնը ծայրայեղ եղաւ : Ժամ եւ արդ իրաւախոնարեան :

Երանեալ սուրբերու ընծայուած յարգանքը իմ կարծիքովս վեց աստիճանաւորում ունի :

1. Երկրպագութիւն առ սուրբս
2. Աղօթք « «
3. Կիրակիի նուիրում « «
4. Պահքի նուիրում « «
5. Ուղղակի աղաչանք « «
6. Անուղղակի « « «

Արդ, քննութեան մը բովէն անցնելու ենք մեր ժամերգութիւնը կամ արդի ուսուցանող եկեղեցիի վարդապետութիւնը, որպէս զի սորվինք թէ այդ աստիճանաւորմանց մէջ ի՞նչ դիրք կը բռնէ Հայ եկեղեցին և ասով լուսաբանութեան մը հասնինք, կամ աւելի ճիշդ մերձեցման գիծ մը գտնենք ընդ մէջ բողոքողին ու ընդդիմախօսին :

1. Երկրպագութիւն առ սուրբս .— Ժամագիրքը և բոլոր մեր եկեղեցական պաշտամանց գիրքերը երբ լման ուսումնասիրենք, շատ դիւրին պիտի տեսնենք թէ Հայ եկեղեցիի երանաշնորհ հայրապետները հակառակ են սուրբերու երկրպագելու գաղափարին . ուստի և սովորութիւն ըրած

են՝ ժամագրքի առաջին մաղթանքէն սկսեալ մինչեւ վերջինը կիսել աղօթքները և ժողովուրդին ազդարարել թէ «Աստուծո՛յ երկրպագեացո՛ւք»։ Իրենց այս հրահանգը Պատարագի խորհուրդին մէջ բազմիցս նըշանակեր են։ Մկրտութեան, Դրոշմի, Պսակի և այլ խորհուրդներու աղօթքներուն մէջ լիաբուռն ցանած են. առով պայծառօրէն վարդապետած են թէ Հայ Եկեղեցին միայն ու միայն Աստուծոյ կ'երկրպագէ, և արարածներէ և ո՛չ մէկին առջեւ կարելի է ծնրադրել՝ առանց մեղանշելու։ Քննադատեալ ուրիշ Եկեղեցիներու դիրքը կարելի՞ է բաղդատել մեր Ս. Եկեղեցիին. պատասխանը՝ որչափ ես կ'ենթադրեմ՝ պիտի ըլլար, Ո՛ր։

1895ին հրատարակուած է «Նախահրահանգք Քրիստոնէական Ուսման» դասագիրքը, որուն մասին արդի Ս. Հայրապետը՝ իբրեւ Պատրիարք՝ և ժամանակին կրօն. ժողովը կը հռչակէին թէ պարտաւորիշ կերպով պէտք է ուսուցուի Հայ դպրոցներու մէջ։ Այդ պատրիարքական օւկանը կ'ըսէր. «Հայ Եկեղեցին ո՛ր և իցէ արարածի չերկրպագեր, հապա միայն Աստուծոյ»։

Երբ Կաթողիկ ազդեցութեան չըջանն էր, Տէրոյենցներ կը գտնուէին որոնք կը ճգնէին Եկեղեցիի ուղիղ ընթացքը ստերիւրել։ Տէրոյենց կը փաստաբանէր թէ Հայ Եկեղեցին ունի յարգական երկրպագութիւն առ սուրբս՝ ըստ որոյման Նիկիոյ Բ. ժողովին։ Զարմանալի եղած է Տէրոյենցականներու այդ ճիգը։ Պատկերասէր այդ ժողովը, թէև յարգի առ Յոյն, իբրեւ եօթներորդ տիեզերական ժողով, ինչո՞վ կրնար իշխել Հայ Եկեղեցիին վրայ, քանի որ Հայ Եկեղեցին անդրդուելի որոշում ունի թէ կը ճանչնայ միայն Երեք Ս. ժողովները։

Ուստի նկատելով մեր ամբողջ եկեղեցական կարգադրութեանց ոգւոյն մեզի ուսուցած և Պատրիարքական որոշմնագրով վարդապետուած ճշմարտութիւնը, թէ Հայ Եկեղեցին չերկրպագեր առ սուրբս, հարկ է որ սրբադրութիւն ունիթոռեան ներշնչումի մը արդիւնք «անկանխօք առաջի քո Տիրու-

մայր» մաղթանքը, իբրեւ երկրպագութեան շատ մօտիկ բանաձև պարունակող ինչ, Պէտք է սրբադրուի բազմաթիւ ժամամուսներու մէջէն միակը եղող «Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց» ժամամուտը։

Շարակնոցի մէջէն «երկրպագեմք առաջի տեւողական նշխարաց» հատուածը։

Եկեղեցին կրնայ հակասական որոշումներ պարտադրել հաւատացեալներուն վրայ. բնականաբար ոչ։ Ուստի և այդ սրբադրութիւնը զմեզ ազատ կ'ընէ հակասութիւններէ։

ՎԱՐԴԱՆ ԲԶ. ԱՍԼԱՆԵԱՆ
(Շարունակելի)

ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵՑԻ

(Շար. 25րդ թիւէն)

Գերմանոսի բուդրին պատասխանը

Ստեփանոս արեւելեան մեծարանքի բանաձևով մը կը սկսի իր այս պատասխանը, կոչելով զԳերմանոս «Տիեզերական Հայրապետ և վերատեսուչ հոգւոց մեծանուն և թագաւորական քաղաքին Կ. Պոլսի»։

Յետոյ անմիջապէս կ'անցնի հայ ժողովուրդին նախնական վիճակին, և ցոյց կուտայ թէ անոնք ո՛րքան ստորին և աւաղելի կացութեան մը մէջ կը գտնուէին՝ երբ տակաւին քրիստոնէութիւնը մուտ գտած չէր ի Հայաստան։

Կը խոստովանի՝ գրի չգոյութեան պատճառով՝ Հայ ժողովուրդին տգիտութիւնն և մասնանիշ կ'ընէ այդ բանին հետեւանքով անոնց անգէտ միալը անցեալին, ներկան ապագայից կտակելու անկարողութիւնը, և վերջապէս ամէն բանէ զուրկ խաւարի մէջ խարխափիլը. միւս կողմէ չմոռեալով սակայն յայտնել թէ ի՞նչպէս վերցաւ այդ արմատացած տգիտութիւնը

հաւատքին և ուրիշ շատ մը բաներու մասին՝ երբ բանին կենաց քարոզութիւնը սկսաւ ծաւալիլ աշխարհին ամէն կողմը ի ձեռն Սրբոյն Գրիգորի :

Ասկէց ետքը կը յիշատակէ երեք Տիեզերական Ժողովները, զորս կ'ընդունի Հայաստանաց Եկեղեցին և կը բացատրէ թէ ինչ բանի համար գումարուեցան անոնք : Կը յիշէ նախ Նիկիոյ Ժողովը՝ որ գումարուեցաւ «ի քակումն Արիոսի» և ուր ներկայ էր ինչպէս յայտնի է ի պատմութենէ՝ Ս. Արիստակէս՝ Գր. Լուսաւորչի որդին՝ որ Հայաստան բերաւ նոյն Ժողովին մէջ սահմանուած և մինչև ցարդ առանց յաւելման և յապաղման պահուած Հաւատոյ հանդանակը : Երկրորդ՝ կը յիշէ Կ. Պոլսոյ Ժողովը՝ որ գումարուեցաւ «ի կործանումն Մակեդոնի», և երրորդ՝ Եփեսոսի Ժողովը որ գումարուեցաւ «ի լուծումն Նեստորի» : Ասոնք են կ'ըսէ մեր ընդունած Ժողովները, իսկ Բաղկեդոնի Ժողովը բացէ ի բաց կը մերժենք, որովհետեւ մեր նախնի հայրերը բնաւ չեն ընդունած զայն :

Եւ այն առաջարկութեան վրայ՝ ըստ որում կը ստիպէր Գերմանոս որ ընդունած կէտերնին նշանակէին՝ և այն մասերը որոնց համար առարկութիւններ կրնային ունենալ ընկիւք գրաւորապէս հաղորդէին իրեն, Ստեփանոս գովելի համեստութեամբ մը կ'ըսէ որ թէ և անկարող ենք մենք ձեզի պէս գեղեցկադիր յարմարութեամբ շարադասելու մեր ըսելիքները, (հաւանաբար թուղթին յունարէն խմբագրուած ըլլալուն նշան մը պէտք է համարիլ այս ակնարկութիւնը), սակայն ըստ կարելոյն պիտի ջանանք ներկայացնել զանոնք, դէմ դիմաց բերելով ձեր ըրած առաջարկութիւններուն :

Նախապէս՝ հաստատելու համար թէ Բրիտանոսի անձին վրայ երկու բնութիւն, երկու ներգործութիւն, երկու կամք ընդունիլը բանաւոր չէ՝ վկայութիւններ յառաջ կը բերէ : Կ'ըսէ թէ Ս. Աթանաս Ազեքսանդրացի առ Ապողինար գրած թուղթին մէջ «մի բնութիւն Աստուծոյ բանին մարմնացելոյ» դաւանեցաւ : Նոյնը ըրաւ նաեւ Մեծն Կիւրեղ՝ առ Սուկիմոս եպիսկ. գրելով՝ թէ «միաւորութենէն ետքը բնու-

թիւնները իրարմէ չենք անջատեր, և ո՛չ ալ երկու որդիի կը բաժնենք, այլ ինչպէս որ մեր հայրերը ըսին՝ մենք ալ այնպէս կը դաւանինք՝ այսինքն «մի բնութիւն Աստուծոյ բանին մարմնացելոյ» : Կիւրեղ նոյն բանը դաւանած է նաեւ, կ'ըսէ, ուրիշ շատ մը անձերու գրած թուղթերուն մէջ. զոր օր. առ Եւդոգիոս քհյ., առ Թէոդոս թաւաւոր, առ Եպիսկ. Մելիտենեայ Ա. կիոս, և յետոյ կը յաւելու թէ ասոնք յայտնի նշաններ են որոնք ցոյց կուտան թէ ձեր ըսածները հակառակ են Ս. Հայրերու դաւանութեան :

Երկու ներգործութեանց խնդիրին գալով՝ Սիւնեցի դարձեալ վկայութիւններ յառաջ կը բերէ Ս. Հայրերու կարծիքներէն : Աթանասի համար կ'ըսէ թէ շատ մը անձերու՝ զոր օր. առ Արիոս գրած չորրորդ ճառին և առ Դելփոս եպիսկ. գրած թուղթին մէջ հետեւեալ կարծիքը յայտնած է. թէ «Բանը մարմնին տկարութիւնը իր վրայ կը կրէր իբրեւ իր տկարութիւնը, որովհետեւ իրենն էր մարմինը, և մարմինն ալ գործակից էր Աստուծոյ գործերուն, որովհետեւ անով գոյութիւն ունէր» :

Գրիգոր Նիւսացի սա՛ պէս կը գրէր ընդդէմ Եւնոմիոսի գրած չորրորդ ճառին մէջ. «Բրիտանոս իբրեւ ճշմարիտ Աստուած իր մարմնոյն շնորհիւ կը ներգործէ ամէնուն փրկութեանը վրայ» : Նոյն իսկ, կ'ըսէ, Յովհան Ոսկեբերան անգամ իր մէկ ճառին մէջ կը գրէ թէ «միոյ գորութեամբն ներգործութեամբ զբաղմատեալ ախոս չարութեան բժշկեաց, զանազան զսքանչելիսն ի ձեռն միոյ ներգործութեան լնլով» : Կիւրղի համար ալ կը գրէ թէ պարադեանց գրքին մէջ նոյն կարծիքը յայտնած է : Եւ բաւական համարելով այս խնդրին վերաբերութեամբ յառաջ բերած վկայութիւնները ի հերքումն Գերմանոսի կարծեաց՝ կ'անցնի ուղղակի երրորդ կէտին՝ որ է ի Բրիտանոս երկու կամք ընդունելու առաջարկը :

Բրիտանոսի անձին վրայ երկու կամք կ'ընդունիք կ'ըսէ, մին աստուածային և միւսը մարդկային. միւս կողմէ զԲրիտանոս բոլորովին աստուածաց նկատելով՝ այնպէս մը կ'ընդունիք թէ երկու բնութիւնները

առանձին առանձին իրենց սեփական յատկութիւններով կը ներգործեն և կը կամենան, և այս բանը հաստատելու համար վկայութիւնը յառաջ կը բերէք Կիւրեղէն՝ ըստ որում իբր թէ երբ Գրիստոս ուղէր՝ կրնար թոյլ տալ իր մարմինին կարիք կրելու, բան մը որ անհնար է թէ՛ մարմինին և թէ հոգիին համար, քանի որ երկուքն ալ մէկ անձի մը մէջ կը գտնուին: Հիմա պիտի տեսնէք կ'ըսէ Ս. Հայրերու կարծիքները այս կէտին վերաբերութեամբ: Աթանաս «Յաղագս յայտնութեան Փրկչին» ճառին մէջ բացորձակապէս մի՛ կամք կը դաւանի Գրիստոսի անձին վրայ: Նոյն բանը բրած է նաև Ռնորոս եպ. Գրիգոր Նիւսացի իր ընդդէմ Եւնոմիոսի գրած թուղթին մէջ կը գրէր թէ «մարմինը որով չարչարանք կրեց Յիսուս, աստուածային բնութեան հետ միաւորութեամբ էր այն»: Նիւսացի նոյն կարծիքը յայտնած է Աղեքսանդրիոյ թէոփիլոս եպ. ապետին գրած թուղթին մէջ: Եւ ճիշտ նոյն իմաստով կարծիքներ յայտնած են նաև Գրիգոր աստուածաբան և Բարսեղ Կեսարացի:

Այսպէս ի Գրիստոս երկու բնութեան, երկու ներգործութեան և երկու կամքի վարդապետութիւնը ապացոյցներով հերքելէ վերջը կ'անցնի Յունաց ինչ ինչ մոլորութիւններուն՝ զորս իրաւամբ հակառակ կը գտնէ առաքելական սահմանադրութեանց տրամադրութեան: Կը մեղադրէ զանոնք նախնի Ս. Հայրերուն հակառակ «ոչ ապաշխարական» ի քահանայութիւն կամ ի սարկաւազութիւն ընդունելուն համար: Կը ստգտանէ զանոնք այն հեթանոսական ամուսնութիւններուն համար, որով հարազատներու որդիք և դստերք իրարու հետ կը միանային անխտիր:

Յետոյ ապա գալով բուն խնդրոյն՝ որուն չուրջը կը դառնայ գրեթէ ամբողջ գրութեանը՝ իբրև վերջնական պատասխան ի մէջ կը բերէ հետեւեալ դաւանաբանական կտորը. «ՉԱստուածն Բան մարմնացեալ ամենայնիւ՝ որ ինչ մարդոյ բայց ի մեղաց, և ընդ ամենայնս ուղեւորեալ կենցաղոյս անարատապէս և յաստուածային խառնումն, անմահելի է ի մարմնոյն իւրոյ, յարգանդէ

կուսին մինչև ցյաւտեան: Եւ ասի բոլորն Աստուած անմահ, Տէր փառաց խաչեալ, և որով ծնաւն, նովին մարմնով և հոգեով և կամօք և ներգործութեամբ ունի վիսառն զոր ունէր ընդ Հօր. յառաջ քան զյինն աշխարհի յերրորդութեանն երկրպագեալ որպէս նմին Տեառն, և ոյժմ հանգերձ առ սեցելովն» ևն: Եւ ասով կը փակէ Սուրբ փանոս վիճարկութիւնն, ըստ բուականին լուսարանուած նկատելով զայն:

Չամէնան և Հ. Գ. Զարրհանելեոն վանական վարդապետի վկայութեան վրայ յենլով անվաւեր կը նկատեն այս թուղթին վերջին մասը և նոյն ատեն նախադասական գրութեամբ մի. բայց ծայրէ ի ծայր աչքէ անցնող մի որ և է նախատինք պիտի չտեսնէ անոր մէջ, և ոչ իսկ յայտնի նշան մը Սուրբ փանոսի գրչէն ելած չըլլալուն, այլ միւսնոյն ոգին է որ կը տիրէ ամբողջ գրութեան մէջ:

(Շարունակելի)

ԵՂԻՇԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ

“ԳԵՂՈՒՆԻ,”

Ի ՆՊԱՍՏ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԿԱՅԵԼՈՅ

Վենետիկեան Միթիթարեանց պատուական Միաբանութեան կողմէ վերջերս կատարուած գեղարուեստական այս հոյակապ հրատարակութիւնը, զարդարուած միջազգային համալու ունեցող նկարիչներու զործերուն բազմազոյն և միազոյն արտատրւածութեամբ, և Կիլիկեան արհաւիրքի տեսարանները պարզող սարսուռն նկարներով, ինչպէս նաև Հայ և օտարազգի հեղինակներու պատկերներով, իր նուրբ ճաշակով և պարունակութեան ճոխութեամբ յաջողապէս կը մրցի եւրոպական լաւագոյն գեղարուեստական հրատարակութեանց հետ: Վերահաս ձմեռը, որ ծայր աստիճան թըշուառութիւն կը սպառնայ Կիլիկեան որդերուն, նոր գրգիռ մը պէտք է ըլլայ բարեսէր ազգայնոց, փութալու մէյմէկ օրինակ զնելու նոյն գեղեցիկ հրատարակութեան, որ սպառելու և հաշիւները վերջնապէս փակուելու վրայ են:



Տ. ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿ. ԿԻԻԼԵՍԵՐԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Ն. Ս. Օծուծիւն Վեհ. Կաթողիկոսէն այս անգամ եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ստացողներուն մէջ, ուշագրաւ դէմք մը կը ներկայանայ Տ. Բարգէն Եպ. Կիւլէսէրեան, թէ՛ իր տոհմային եկեղեցագիտական հրատարակութիւններով, և թէ գաւառներու մէջ իբր առաջնորդ և իբր վանահայր ունեցած արդիւնաւոր գործունէութիւնով:

Այնթապի մէջ ծնած 1868 մարտ 23ին, քաղաքին ազգային և մասնաւոր վարժարաններու մէջ կը ստանայ նախնական կրթութիւն, և պահ մը արհեստի հետեւելէ ետքը, 1885ին կը մտնէ տեղւոյն Վարդանեան Կրթարանը: 1889 Նոյեմբերին կուգայ մայրաքաղաք, և կը մտնէ Արմաշու Դպրեւանքը, ուր 1890ին կը ստանայ դպրութեան, 1892ին սարկաւազութեան աստիճանները,

և 1895ին կը ձեռնադրուի քահանայ և կ'ընդունի վեղարի օրհնութիւն՝ Դպրեւանքի վերատեսուչ Տ. Մաղաքիա Եպիսկ. Օրմանեանէ: 1896ին կ'ընդունի մասնաւոր վարդապետութեան գաւառան, իբր doctorat ներկայացուցած ըլլալով Քննական ուսումնասիրութիւնը ԵՂԻՇԷԻ վրայ, որ Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացաւ 1898ին:

1896 Սեպտ. 21ին Կ. Պոլիս Եւնիքէօյի եկեղեցւոյն քարոզիչ կը կարգուի, և Օրմանեան Սրբազանի Պատրիարքութեան կոչուելէն ետքը կը նշանակուի քարտուղար անձնական դիւանի, նոյն ատեն քարոզիչ Պէշիկթաշի եկեղեցւոյն, ստանձնելով նաև դասեր Մաքրուհեան վարժարանին մէջ: 1897 Մարտ 13ին Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովին կողմէ կը նշակուի «օգնական փոխանորդ կաթողիկոսական տեղապահութեան Կիլիկիոյ» բայց «չատ բանաւոր» պատճառներով չընդունիր այդ պաշտօնը, և Կեդր. Վարչութիւնը, փոխելով իր նախորդ որոշումը «ինչ ինչ պարագայից առջև», 1897 Սեպտ. 1ին կը կարգէ զինքը Առաջնորդական տեղապահ Ճանիկի (Սամսոն): 1897 Սեպտ. 21ին Ծայրագոյն Վարդապետութեան գաւառանը կ'ընդունի Օրմանեան Սրբազանի ձեռքէն:

Երկու տարիի չափ պաշտօնավարելէ ետքը Ճանիկի Վիճակին մէջ, 1899ին Ազգ. Կեդր. Վարչութիւնը «Տարօնոյ ընդհ. վանահայր և Առաջն. տեղապահի» պաշտօնով Մուշ կը փոխադրէ զինքը Սամսոնէն: Մշոյ մէջ, տակաւին տարին չբոլորած, կը բանտարկուի, (մինչ միւս կողմէ առաջնորդ կ'ընտրուէր Տրապիզոնի), և ետքը ընդհանրութեամբ կը փոխադրուի Պոլիս: Այդ շրջանին Մուշ յանուն որբերու զրկուած գումարի մը գործածման խնդրոյն առթիւ կը դատաւիւտուի հայ մամուլին կողմէ, այնպիսի ատեն մը երբ բացարձակապէս անկարելի էր նոյն դրամին ինչ նպատակի գործածուած ըլլալը պարզել՝ չարաչառու-

թեան ու է կասկած փարատելու համար. ինչ որ կարելի եղաւ՝ սակայն՝ ազատութեան հռչակումէն ետքը, և իր բազմաթիւ համակիրներն ու բարեկամները գոնունակութեան լայն շրջնէ մ'առին, համոզում գոյացնելով եղած քննադատութեանց բացարձակապէս անհիմն ըլլալուն:

1901 թիւոր. 21ին Տրապիզոնի Գաւառ. Լէդհ. Ժողովը կը կրկնէ իր ընտրութիւնը, բայց ժամանակին բռնապետական կառավարութեան կողմէ թոյլ չի տրուիր իրեն՝ Տրապիզոն երթալ, և կը բռնադատուի մնալ Կ. Պոլիս՝ ընդ հակողութեամբ, թէ և զարմանալի հակասութեամբ մը իրեն կը տրուի Գ. կարգի Մէճիտէ պատուանշան: Նոյն տարին մինչեւ Սեպտ. կը քարոզէ Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցին և յետոյ կը նշանակուի քարոզիչ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն, և մատենադարանապետ Ազգ. Մատենադարանին: 1902ին Ամնայն Հայոց Կաթողիկոսը՝ «հաւաստացեալ զանձնանուէր վաստակոց և եռանդեան բանիւ և գրով», կը նուիրէ իրեն վարդապետական ականակուու Լսնջախաչ:

1906ին Առաջնորդ Կ'ընտրուի Մարաշի, բայց Պատրիարքարանը չի համարձակիր կառավարութեան հաւանութիւնը ուզել: 1907ի վերջերը կը նշանակուի «փոխ-վանահայր և վերապետուէ Դպրեվանոց»: 1909 Մարտ 6ին Գաղատիոյ Գաւառ. Լէդհ. Ժողովը առաջնորդ Կ'ընտրէ զինքը: Նոյն ատեն առաջնորդ Կ'ընտրուի Տիարպէթիքէն, և առաջարկներ Կ'ընդունի ուրիշ տեղերէ ալ, բայց Գաղատիոյ տուած խոստումը կը յարգէ, և հոն Կ'երթայ առաջնորդելու, և այժմ Գաղատիոյ թեմին վրայ կը ձեռնադրուի եպիսկոպոս:

*. Տ. Բարդէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանի՝ իբրեւ առաջնորդ և վանահայր ստանձնած պաշտօններուն այս թուումէն ետքը, հարկ է մասնաւորապէս ծանրանալ իր գրական գործունէութեան վրայ, որ նշանակելի դերք մը տուած է իրեն՝ իբրեւ գրագէտ, իբրեւ բանասէր, իբրեւ հմուտ պատմագէտ: 1901էն 1908, եօթը տարուան պանդխտութեան, 'լաւ ևս տարակերութեան շրջանին, զոր անցուց Պոլսոյ

մէջ, մասնաւորապէս աշխատեցաւ բեմով ու գրականութեամբ, քանի որ արգիլուած էր իրեն գաւառներու մէջ օգտակար ըլլալ: Գործունեայ մտքի տէր և աշխատութեան եռանդով տոգորուն, այդ շրջանին էր որ կարգի դրաւ Ղալաթիոյ Ազգ. Մատենադարանը և կազմեց հայերէն ձեռագրաց ծուցակը, գրական և ուրիշ յանձնաժողովներու աշխատութեանց մասնակցեցաւ, հրապարակագրութիւն և ուսուցչութիւն ըրաւ (Կեդր. Վարժարան և Պէրպէրեան): Այդ շրջանին էր որ երկու տարի անընդհատ հրատարակեց եկեղեցագիտական Լոյս շաբաթաթերթը, նիւթական եւ րաշխաւորութեամբ և աշակցութեամբ Ազն. Խօրասանձեան տնարց, — որ ցարդ հրատարակուած կրօնաթերթերուն մէջ աիպար հրատարակութիւն կը մնայ իր հմուտից, լուրջ ու բազմակողմանի, միեւնոյն ատեն ժողովրդային պարունակութեամբ: 1890 թուականէն ի վեր աշխատակցած է Արեւելի, Լուսնայի, Բիզանդիոնի, Բիւրակնի, Մասիսի, Արեւ. Մանուշի, Արարատի, Բանասերի և Հանդիս Անտօնայի, մշակելով առաւելապէս եկեղեցագիտական, պատմական և բանասիրական նիւթեր, դիւրահասկնալի, սահուն ոճով մը, իսպառ հեռու խրթնարանութիւններէ և մթնութիւններէ որ նախասիրութիւնն են կարգ մը գրողներու, վեղարաւոր կամ ոչ:

Տ. Բարդէն Եպիսկ. Կիւլէսէրեան կեանքի առուգութեան շրջանին մէջ է տակաւին, և Հայ Եկեղեցին ու Հայ Մատենագրութիւնը կարեւոր ծառայութիւններ կը սպասեն իրմէ:

Ահա՛ իր հրատարակած գործերը. —

Կիլիկիա, (1896, Տփլիս):

Ժողովուրդին Տօնացոյցը, (1901, Պոլիս):
Միւնստար, Տուա՝ Բիքսպը, (Բ. տպ. 1904, Կ. Պոլիս):

Քարոզներ, (Ա. հատոր, 1904, Պոլիս):
Մով, Տյով և Հոռնկա, (1904, Վիէննա):

Լոյս, շաբաթաթերթ եկեղեցագիտական, (1905 և 1906, Կ. Պոլիս):

Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն, (1908, Վիեննա):

Յիշատակարան Պատնանեան Դրիգոր Պատրիարքի, (1908, Բարիդ):

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻՏԲԸ

ԴԷՊԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Նախնական դարերու մէջ մարդկային միտքին առաջին խարխափումները անյայտ ու անորոշ կը մնան գրեթէ իրենց բովանդակ ինքնութեան բնորոշ յատկութիւններով, ու չեն պարզուիր յստակօրէն մեր աչքերուն առջեւ. որովհետեւ այդ հնամենի ժամանակներէն ոչ մէկ գրութիւն կը ներկայանայ մեզ՝ նախամարդկային մտաւորական կարողութեանց զանազան աստիճանաւորումները արտայայտող: Ի՞նչ որ գիտենք այսօր, ի՞նչ որ կը պատմեն արդի աշխատաւորներու բազում ուսումնասիրութիւններ, լոկ ենթադրութեանց վրայ հիմնուած տեսութիւններ ու գաղափարներ են՝ քիչ անգամ անհամաձայն իրականին, որոնց հասած են կամ հասնիլ կարծած են նորածիններու և վայրենիներու մտայնութեան քննութեամբ՝ ընդունելով զանոնք իբր որոշ ու միակ հանգրուանները նախամարդուն մտքին դրացի: Յիշատի ո՞րն է մտքի այն վիճակը որ եթէ ոչ ամբողջովին, գոնէ քիչ տարբերութեամբ, նման կը թուի ըլլալ նախնականին. նորածինը չէ՞ և կամ վայրենին, որ քաղաքակրթեալ մտքերու բաղդատմամբ ամենէն աւելի նախնական իմացականութեան ինքնորոշիչ յատկութիւնները և վիճակները կը պատկերացնէ իր վրայ:

Ինչպէս ըսինք, ոչ մէկ գրութիւն ունինք անցեալէն նախնական մտքին յատկութիւնները որակող, սակայն մարդ իր արդի իմացականութեամբ անգիր յիշատակութիւնը չէ՞ նախկինին, և արդէն այնպէս չէ՞ աշխարհի բոլոր գոյութեանց համար ալ. ո՞ր տիեզերական գոյութեան այժմեան իր բարդ ձևերովը պարզ գոյութիւն մը արդիւնքը չի համարուիր: Տրամաբանական պիտի ըլլար հաւատալ թէ ինչ որ գոյութիւն ունի աշխարհի իրադարձութեանց մէջ, առհասարակ առանց բացառութեան պարզ նախնական վիճակէ մը անցնելով է որ հասած է արդի բարդութեանց: Ուստի

և իմացականութիւնը կամ միտքը, համապատասխան և հետեւաբար հպատակ վերոյիշեալ օրէնքին, նմանօրինակ յառաջացում մը ունեցած է: Քանի որ կարելի է ամէն բարդութեանց մէջ գտնել պարզը, որովհետեւ այդ բարդութիւնը յառաջ եկած է շատ մը պարզերու միացմամբ—կարելի է նաեւ իջնել՝ ինչ որ շատ տրամաբանական է՝ մտաւորական բարդ բարձրութիւններէ դէպի ստոր նաստիճանները, ուրկէ անցած է միտքը հարկաւորաբար այդ բարձրութիւնները հանգրուանելէ առաջ:

Մեր նախնիքներէն ունինք արդէն մտաւոր հիմ մը, որ ծածկուած յաջորդական խաւերով, խեղդուած՝ ըստ երեւութի՝ բարդուած դարերու ծանրութեանը տակ, չի դադրիր վերերեւելէ մերթ ընդ մերթ խուզարկութեամբ այդ զանգուածային բարդումներուն մէջէն:

Տարտամութիւնը և ուշադրութեան կապակցութիւնը կը կազմեն առաջին մտաւոր վիճակը մարդկութեան. ամէն բանէ առաջ անուանադիր մը եղած է մարդ, որակելով յաջորդաբար մէկ կամ մէկէ աւելի ինքնաբեր յօգաւորումներով այն բոլոր առարկաները, բոլոր երեւոյթները և բոլոր զգայնութիւնները, որ ուղղակի կամ անուղղակի ներկայացած են իրեն: Յետոյ, երկար ու դժուար ճիգի մը հետեւանքով է որ կարողացած է ամփոփել իր գննութիւնները և յիշատակները, դասաւորելու համար իր գաղափարները՝ ըզգաւորութեամբ վերլուծութեամբ և համադրութեամբ:

Ի՞նչ կրնար ըլլալ այս ժամանակներուն մէջ փիլիսոփայութիւնը, այսինքն տիեզերքի յղացումը մարդկութեան հետ ունեցած իր յարաբերութեանց մէջ: Փիլիսոփայութիւնը անուանակոչումն է այն ամէն բաներու որ կան ընտելեան մէջ մեծ, ստեղծագործութեան և մահկանացուներու սրբախն մէջ խորհրդաւոր. ամէն ժամանակ կրիման, հողին ձեւը, պարագաները, դրացնութիւնները, կղզիացումը նպաստած են պէսպիսելու ցեղերը, սահմանելու, տրկարացնելու և կամ երազելու իրենց անհաւասար յեղաշրջման ընթացքը. ի գուր զանազան ժողովրդոց իրարու հետ ունեւ

ցած տարրերութիւնները կը քողարկուին, կը մեղմանան կամ կը քիչնան ընդհանուր քաղաքակրթութեան մը ազդեցութեան տակ:

Բացայայտ է որ միակ դար մը իր մէջ կը պարունակէ միեւնոյն ժամանակ թէ՛ տղայ ժողովուրդներ, թէ՛ չափահաս ազգութիւններ և թէ՛ ծերացած ցեղեր: Ներկայ վայրենի ժողովուրդներուն քով պիտի կրնանք գտնել բնազանցական դրութեանց սերմը, սկիզբը՝ ազէտ հետաքրքրութեան պտուղ՝ բոլոր ժամանակներուն մէջ խնամքով պահուած: Դիւրին պիտի ըլլայ քննել մանուկի մը քով, առաջին՝ մտածումներու օգնութեամբ քաղուած ու է նշան, առանց մոռնալու սակայն թէ քաղաքակրթեանը քով, տղան իր վրայ կը կրէ ժառանգականութեան բոլոր դրոշմները, և թէ դաստիարակութիւնը—նոյն իսկ եթէ ըլլայ չատ քիչ—կը բաւէ բարեփոխելու այն հետեւութիւնները որ սպաւորութիւններէն յառաջ կուգան: Վերջապէս վայրենիներուն բարքերը, անոնց զգացումները և անոնց գործերը էականութեւ և իրերու հանդէպ, մեզ պիտի լուսաւորեն, պարզելով մարդուն դիրքը տիեզերքի մէջ, դատողութենէն և բարբառէն առաջ:

Հիմա տեսնենք թէ ո՞րն էր մարդկային մտքին զննացքը, և որո՞նք էին փիլիսոփայութեան սկզբնաւորութիւնները: Փիլիսոփայութիւնը՝ իր ամբողջ վարդապետութեամբ՝ հաստատուած է պատճառականութեան հիման վրայ, պատճառի գաղափարին վրայ: Հին ազգերու մէջ մարդուն կողմէ տիեզերքի վրայ ստեղծուած բոլոր աստուածները միթէ մարդուն հետաքրքրութեան, անոր ի՛նչու հաւնաւորներուն պատասխանելու համար ստեղծուած չէն: Ինչո՞ւ համար քաղուկս կը շարժեմ, ի՛նչու համար ջուրը կը հոսի, ինչո՞ւ համար կայծակը կ'իյնայ կամ ի՛նչու համար հովը կը փչէ.—Որովհետեւ այնպէս կ'ուզեն և կամ այնպէս կ'ուզուի, պիտի պատասխանեն շատեր, ինչ որ ճշգրիտ պատասխանը չէ: Կը մնայ բացատրել թէ ինչո՞ւ համար մարդ կ'ուզէ, ինչո՞ւ համար իրերը պիտի ուզէին: Այսպէս՝ ինչու համարներու անհատուած

շարք մը, որ ընդհանրապէս չատ քիչ կը գտնուի նոր ծնող մտքին մը մէջ, որպիսին է տղունը, և աւելի չատ՝ չափահաս մտածողութեանց քով:

Պատճառականութիւնը ա՛յնքան անորոշ ու ամուլ է ինքնին, որ չէ կարելի վերածել իր իրական տարրերուն ամէն ժամանակ: Պատճառները իրողութիւններ են կամ գոյութիւններ՝ առանց որոնց ուրիշ իրողութիւններ կամ ուրիշ գոյութիւններ չեն կարող լի յայտ դալ: Իրենց յառաջ գալը, ծնունդը կախում ունի անպատճառ առաջիններուն հարկ անհրաժեշտ ներկայութենէն: «Ամէն բան պատճառ մը ունի և ոչ մէկ իրողութիւն կայ առանց պատճառի»: Բանաձեւ մը ահա, որ վերեւ յիշուած տողերուն խտացումն է, և ուրիշ բացայայտ կ'երեւի թէ ոչ մէկ բան կ'արտադրուի իր գոյութեան պայմաններէն դուրս:

Պատճառականութեան և վախճանականութեան գաղափարները մարդկային միտքը չբաղեցուցած են չատ հին դարերու մէջ իսկ, նմանօրինակ գիտութեան մը գոյութենէն առաջ: Չինական, Եգիպտական, Ասորական, Պարսկական և Հնդկական սուրբ Մատեանները ակնյայտնի ապացոյցներ են կանգուն:

Վերջապէս այն միակ գիտութիւնը որ աննախընթաց ժամանակներէ ի վեր գոյութիւն ունեցած է և կը ձգտի իր որոշ ուղղութեամբ որոնել, գտնել տիեզերական կարգ մը իրաց սկզբնապատճառները, կը կոչուի Փիլիսոփայութիւն: Գիտութիւն մ'է ան, և բնական ալ է որ այնպէս կոչուի, որովհետեւ իր գոյութիւնը կ'ստանայ զարմացմամբ, որ առ հասարակ ընդհանուր օրէնքն է գիտութեան, միակ ազդակը՝ պատճառներու խուզարկու ընթացքին գիտութիւն կոչուելուն: Փիլիսոփայութիւնը հոգեբանական գիտութեանց և բնազանցութեան ամբողջութիւնն է, քանի որ հոգեբանութիւնը սկզբնաւորութիւնն է նախնական փիլիսոփայութեան կամ բնազանցութեան: Միտքը՝ խորհրդածութեան առ մենամեծ գործին, վիճաբարը իմաստասիրութեան և առ հասարակ բոլոր գիտութեանց, իր զարմանալի, յոյժ արդիւնա-

մեր գործունէութեան շնորհիւ ընձեռած արտադրութիւններովը կը պարծի ու պիտի պարծի աւելի փառաւոր ու շողշողուն, երբ հետզհետէ նորանոր գաղտնիքներու դռները բանայ մարդկութեան աչքին առջեւ: Միջավայրը անոր ուղղութիւնը գծող, տրամադրութիւնները այլափոխ առաջնորդն է: Տեսնուած է թէ տարբեր միջավայրեր տարբեր ազդեցութիւններ ի գործ կը դնեն. ժողովուրդներ կան որոնք մասնաւոր կարողութեանց մէջ զարգացումներ ունեցած են միայն, և իրենց այդ զարգացման աճիքն մասնաւորութեամբ ուրիշ բան չէ եթէ ոչ միջավայրի ազդեցութիւն: Ան է որ կ'առաջնորդէ զանոնք, իր ճշդ բնոյթին համաձայնեցնելով և ծնունդն ունեցող մէջ ներքին յօտարութիւններ ու տրամադրութիւններ գործ կը թելադրէ. ան է որ ժողովուրդի մը նկարագիրը կը կազմէ, ձեռք բերելիք զարգացման ուղին կ'որոշէ, նախասիրութեան մը տեսչն ու փափաքը դնելով անոր սրտին, անոր հոգւոյն ու ինքնութեանը մէջ:

Հին ժողովուրդներու կեանքը երբ աչքի առջև ունենանք, հոն կը տեսնենք զանազան յետադէմ ազգերու մէջ այնպիսիներ, որ հսկայաքայլ յառաջացում մը ցոյց տուած են գեղարուեստական այլ և այլ ճիւղերու մէջ, հանդիսանալով ճշմարիտ ռաւիքներ արուեստագիտութեան, հսկայական արտադրիչներ մտքի, որոնք երկար դարեր իրենց ազդեցիկ թևարկութեան ներքեւ ունեցան գրեթէ համայն Եւրոպայի և մինչև իսկ աշխարհի տգէտ ազգութիւնները: Յունաստան և Իտալիա, հա նշանաւորագոյնները այդ անցեալի մէջ մեռնող ժողովուրդներէն. առաջինը իբր մտաւորական կեդրոն իսկ երկրորդը ձայներու և երանգներու հայրենիք: Բնութիւնն իր հրաշալի շնորհներովը, հրապուրիչ տեսարաններովը, լեռներովն ու ծովերովը ներշնչող ուժ մ'էր այս երկու ժողովրդոց ալ հաւասարապէս: Յունական միտքը մանաւանդ բարեղք զարգացում մը ունեցաւ դէպի բանաստեղծութիւն ու փիլիսոփայութիւն, փիլիսոփայութիւն՝ որ օր մը արդէ իմաստասիրութիւնը պիտի ծնէր:

ՎԱՀԱՆ ԽԻՒՏԱՎԵՐՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆԻՐ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԷԶՄԻԱՄՆԻ ՄԷՋ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Մատթէոս Բ. Ս. Կաթողիկոս շաբթուս Ազգ. Պատրիարքարան ուղղած հեռագրով կը ծանուցանէ թէ Սեպտ. 19ի Կիրակի օրը կատարած է Եպիսկոպոսական ձեռնադրութիւնները: Նոր Եպիսկոպոսներն են՝ Եգիպտոսի առաջնորդ Տ. Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի, Պանտմա-Պալըքէսէրի առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկ. Մազլումնան, Գաղատիոյ առաջնորդ Տ. Բաբգէն Եպիսկ. Կիւլէսէրեան, Տիարպէքիւրի Առաջնորդ Տ. Զաւէն Եպիսկ. Եղիաբեան, Կարնոյ առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ. Սաատէթեան, Սեբաստիոյ առաջնորդ Տ. Թորգոմ Եպիսկ. Գուշակեան, և Տ. Կարապետ Եպիսկ. Մկրտիչեան, որոնք եւս ձեռադրաւ ծանուցած են Ս. Պատրիարք Հօր՝ իրենց ձեռնադրութիւնը, և Ն. Ամենապատուութեան օրհնութիւնը խնդրած: Ս. Պատրիարք Հայրը հեռագրով շնորհաւորեց զիրենք:

Այս կերպով հայ եպիսկոպոսներու դասակարգին վրայ կ'աւելնայ շատ կ'արեւոր ուժ մը զարգացեալ եկեղեցականութեան: Ապահով ենք որ նորապսակ Սրբազանները հուատարիմ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւանդ սովորութեան համաձայն, ցվերջ պիտի ուզեն հովուել ժողովուրդն այն վիճակին որուն վրայ ձեռնադրուեցան: Մեր խոնարհ շնորհաւորութիւններուն հետ կ'ուղղենք ջերմ մաղթանքներ արդիւնաւորութեանը համար իրենց ջանքերուն ի փառս Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյն, և յօգուտ և ի յառաջդիմութիւն տառապեալ հայ ժողովուրդին:

Տաճարի ներկայ թուով կը հրատարակենք լուսատիպ պատկերն և կենսագրական նօթեր նորապսակ Տ. Բաբգէն Եպիսկ. Կիւլէսէրեանի: Յառաջիկայ թիւերով պիտի հրատարակենք տեղեկութիւններ միւս Սրբազան Հայրերուն կեանքին և գործունէութեան վրայ:

Ս. ՊԱՏՐԻԱՐԷ ՅՕՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Ս. Պատրիարք Հայրը կը շարունակէ իր դիմումները: Դատական նախարարէն խնդրեց Արմաշի յետնեալ տուրքերու շնորհուիլը. յայտնեց Ատանայի արկածելոց յատկացուած 23000 ոսկիէն տրուած 10000 ոսկիին անբաւականութիւնը և խնդրեց որ յառաջիկայ տարւոյ պիւտժէին մէջ ալ կարեւոր գումար մը դրուի: Հանրագումար Շինութեան նախարար Վսեմ. Պետրոս էֆ. Հալաճեանէ խնդրեց ի մէջ այլոց կարգ մը կարօտ անձերու՝ ճամբաներու շինութեան մէջ աշխատեցնելու դիւրութիւն մը: Ներքին Գործոց Վսեմ. նախարարին ներկայացուց շաբթուա Մուշէն հասած կրկին հեռագրեր որոնք մասնաւոր կ'ընէին այդ կողմերն հազիւ դադրած խլրտումներուն վերստին ծայր տուած ըլլալը, երեւան հանելով որ կարգ մը գաղանի ձեռքեր ոճիրներ գործել կուտան և տեղական իշխանութիւնն ալ թող կը վարուի չարագործներուն հետ: Նախարարը պատասխանեց թէ իրողութիւնն երեւան հանելու համար բացատրութիւններ պիտի պահանջուին, և տեղւոյն ապահովութեան համար պէտք եղածը պիտի գործադրուի: Ս. Պատրիարքը Պատրուի և Հռոդոսի բանտարկեալներուն ևս արձակումը խնդրեց, և վերստին ծանրացաւ հողային խնդրոյն արագ և արդար կարգադրութեան պէտքին վրայ:

Ահաւասիկ Մշոյ կացութեան վրայ առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկ. Խարախանեանի Պատրիարքարան ուղղած վերջին հեռագիրը՝ Սեպտ. 18 թուականով. — «Բրնայպետական օրերուն պէս, Մշոյ գիւղերուն մէջ ոճրագործութիւնը, հրձիգութիւնն և թալանը կը շարունակուին: Անդորրութեան պահպանութիւնը կառավարութեան պարտականութիւնն ըլլալով հանդերձ, կառավարչին մօտ բրած դիմումներս ապարդիւն կը մնան: Աւազակներն առանց քննութեան ոստիկանատուներէն կ'արձակուին: Շուկային մէջ Հայերուն ինչքը, կրօնքն և նուիրական արարողութիւնները կ'անարգուին և կ'անպատուուին: Այս տեսակ դէպքերու հետեւանքով ժողովուրդին

վստահութիւնը խախտած է և անապահովութիւն կը տիրէ քաղաքին և շրջակայններուն մէջ»:

«ԲԻԻՐՏԻՍՏԱՆԻ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ» անունով մարմին մը կազմուեց է վերջերս Ամրիկայի մէջ: Իր յայտարարութեան մէջ կ'ըսէ թէ 40 տարիէ ի վեր միսիօնարները կը գործեն Բիւրտերու մէջ, բայց ակնկալուած արդիւնքը չեն տուած. ուստի իր նպատակն է ազգային կրթութիւն տարածել Բիւրտիստանի մէջ, նախնական դպրոցներ հաստատելով: «Մենք չենք հաւատար, կ'աւելցնեն, յարանուանական դպրոցներուն, և ասո՛ր համար կը շեշտենք ազգային կրթութիւնը: Մեր դպրոցները պիտի ըլլան Հայուն համար, ինչպէս նաև Եզիտիին և Բուրդին համար, եթէ դիմում ըլլայ: Գործը մեծ է և ստիպողական»: Ընկերութիւնը գործի չպիտի սկսի մինչև որ որոշ գումար մը չունենայ: Մէկ տղար մուտք և 50 սէնդ ամսավճար տրուած է, և որոշուած է առաջին դպրոցն հաստատել յառաջիկայ Յունվարէն, ի Ֆարգին՝ Սլիվան: Շատ կարեւոր ձեռնարկ մ'է այս, քանի որ Բուրդերու դաստիարակութիւնը մեծ կարեւորութիւն ունի երկրին խաղաղացման և յառաջդիմութեան տեսուկէտով:

ԱՐՄԱՇԻ հասոյթը, Վերացման Ս. Խաչի տօնին առթիւ, գոհութեամբ կ'իմանանք թէ այս տարի 15000 զրշ. աւելի եղած է անցեալ տարուանէ: Խնամակալութեան անդամոց ներկայութիւնը մեծապէս նպաստած է հասութից յաւելման: Ասոր շնորհիւ կտրելի եղեր է ընդունիլ դպրեվանք, որոշեալ 20 աշակերտէն աւելի զրկուած 5-6 աշակերտները:

ԽՈՐԲԵՐԴԻ ԵՒ ԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ. — Խարբերդէն կը գրուի թէ տեղացիներու ստուար խումբ մը առաջնորդ Տ. Գէորգ Մ. Վ. Ասլանեանի նոյն քաղաքը միալուն կուսակից է. բայց իր սակաւաթիւ հակառակորդներն անճաշ ցոյցեր կատարելով իրեն դէմ, հարկադրուեցին բարեկամ ազգայինի մը տունն ապաստանիլ: Ազգ. Կեդ. Վարչութիւնը թէեւ գլխաւորաբար կու-

սակալին ձեռք առած միջոցներուն առջև յարմար սեպեց Ասլանեան Ծ. Վ. ի այլ ուր փոխադրուիլը. բայց Խարբերդցիք կ'ըսեն թէ ատոր հետեւանքը պիտի ըլլայ Հ. բարեգործական ընկերութեան նորակազմ մասնաճիւղին՝ իր խանձարուրին մէջ խղ-դուիլը, և Միացեալին հետ Վարժապետա-նոց մը բանալու համար կատարուած բա-նակցութեան դադրիլը։ Ասլանեան Վ. յա-ջողեր է 6-7 ամսուան պաշտօնավարու-թեամբ դպրոցական ընդհանուր ծրագիր մը պատրաստել նաեւ Բրիտանական յարանուա-նութիւններն առաջնորդարան բերելով՝ ա-նոնց հետ համերաշխ գործել և ոտնձգու-թիւններն արգիլել։ Իսկ կուսակալը, կ'ըսեն Խարբերդցիք, Չարսանձագի պէյերուն խօսք տուած է հողային խնդրոյն համար։ Այս վերջին կէտը անհաւանական կը դանդ Քիւզանդիոն որմէ կը քաղենք այս տողերը։

ՈՒՇԱԳՐԱՒԱԿՍԱԿ ՄԸ. — Թիֆլիզի մէջ անցեալները մնած էր Տիկին Վ. Մե-լիք-Հայկազեան։ Հանգուցեալ տիկինը կտակ մը թողած է շատ ուշագրաւ իր տեսակին մէջ։ Կտակած է մահճակալ մը պահել Ա. բասթումանի մէջ, թոքախտաւորներու հա-մար, և Թիֆլիզի վարժարաններուն մէջ՝ քանի մը թոշակաւորներ։ Կարելորդ, սա-կայն, այդ կտակին մէջ, այն է որ հան-գուցեալ Տիկինը չէ մոռցած հայ դրագէտն ու մամուլը։ Կարգադրեր է որ գումար մը յանձնուի Պանքան, որուն տոկոսը՝ տա-րեկան 600 րուբլի, յատկանայ ցմահ բա-նաստեղծ Յովհ. Թումանեանի, որուն հիա-ցող մ'եղած է։ Ասկէ դատ միանուագ 600 րբլ. նպաստ տուլ կտակեր է Հասկեր ման-կական ամսագրին։

ՊԱՅՐԱՄԻ առթիւ Ս. Պատրիարքը Դշ. օր Կայս. պալատ երթալով շնորհաւորա-կան ուղերձ մը մատուց Վիհ. Կայսեր։ Ն. Սրբազնութիւնը այցելեց նաեւ գահաժա-ռանգ իշխանին և նախարարներուն։

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՆ իր Դշ. ի նիստին մէջ նկատի առաւ Պալքէսէրի, Ամասիոյ, Ճէ-զիրէի, Կեսարիոյ, Բալուի, Թալասի, Եր-զնկայի, Գահիրէի, Սամանի առաջնոր-դարաններէն, ինչպէս նաեւ զանազաններէ ներկայացուած եկեղեց. բարեկարգութեան

ծրագրերը, և որոշեց Համագումար Ժողո-վոյ յառաջիկայ նիստին ուշադրութիւն դարձնել։— Սկիւտար Ս. Խաչ Եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ խնդրանաց համաձայն, Ժողովը նոյն Եկեղեցւոյ քարոզչութեան պաշտօնին կոչեց Տ. Խոսրով Ծ. Վ. Պէհ-րիկեանը։— Սկիւտար Ս. Խաչ Եկեղեցւոյ, Պէօլլեքտէրէի, Պէշիկթաշի և Օրթագիւղի Թաղ. Խորհուրդները կը ծանուցանէին թէ իրենց թաղերու Աղգ. վարժարանաց մէջ կրօնի ուսումները կ'աւանդուին կանոնա-ւորապէս ձեռնհաս կրօնուսոյցներու կողմէ։ Ժողովը գոհութեամբ արձանագրեց։— Բէօլթէնձէի Թաղ. Խորհրդոյ խնդրանաց համաձայն, Ժողովը տեղւոյն եկեղեցւոյն հոգեւոր պաշտօնեայ կարգեց Տ. Ներսէս քնյ. Առաքելեանը։— Պրուսայի Վիճակ Փոքր Պէշիկ գիւղացւոց խնդրագրին վրայ, որով կ'ըսէին թէ Տ. Յարութիւն քն. ե-կեղեցին գոցելով մեկներ է, որոշեց խըն-դիրը Պրուսայի առաջնորդարանին նկա-տառութեան յանձնել, և յանձնարարել որ փութով քահանայ մը զրկուի և եկեղեցին բացուի։— Պէշիկթաշի Թաղ. Խորհուրդը և Ղաթաթիոյ Դպրաց Դասը դպրութեան ընծայացուներ ներկայացուցած էին։ Ժո-ղովը ստուգելով անոնց արժանաւորու-թիւնը, որոշեց որ յաջորդ նիստին ներ-կայացնեն իրենց ծննդեան վկայագրերը։— Ռոտոսդոյի Ս. Թագաւոր Եկեղեցւոյ առա-գերէց Տ. Գարեգին քն. Երամեան Ժողո-վին ներկայանալով ինչ ինչ տեղեկութիւն-ներ տուաւ տեղեկան գործերու վրայ։ Ժո-ղովը հարկ տեսաւ յաւելուածական բա-ցատրութիւններ լսելու վերջնական որո-շում մը տալէ առաջ։

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՆ նիստ չգումարեց Դշ. օրը, մեծամասնութիւն չունենալուն պատ-ճառաւ։

ԳԱՏԸԳԻԻՂԻ ՎԱՐԺԱՐԱՆԸ չարթուս առաջին օրերուն խառնակութեանց կեդրոն դարձաւ, հակառակ տարեշրջանի սկիզբէն ի վեր խաղաղ շրջան մը բոլորելուն։ Բշ. առաւօտ քանի մը աշտիներտներ իրենց մէջ հանրագրութիւն մը կը պտըտցնէին ինը-պաստ դադարեալ հրեք ուսուցիչներու. բայց Հոգաբարձութիւնը արգիլեց, հեռա-

ցնեցելով մէկ քանի պարագլուխներ: Հոգաբարձուներու մեկնելէն ետքը, սակայն, այդ տղաք վերստին վարժարան գալով իրենց ընկերներն ալ կը դրդեն և դաստիարակելու հրատարակեն, անկարագրելի խառնակութեան մատնելով վարժարանը. մինչև իսկ իրենցմէ մէկը կը յանդգնի սպառնալիս խօսքեր ուղղել տեսուչ Կէլիպօլիան էֆ.ի հասցէին. վերջապէս վարժարանը կը փակուի նոյն օրը: Յաջորդ առաւօտ Հոգաբարձութիւնը քանի մը տղայ ալ կ'արտաքսէ և դասերը սկսել կուտայ, սակայն ո՛չ դասի հետեւող կայ և ո՛չ ալ յուզումը կը դադրի բարձրագոյն դասարանի «գիտակից» աշակերտներու մէջ: Տնօրէնը վարժարան չի գար Գշ. օրը և հոգաբարձուները կը հսկեն: Եւ որպէս զի դուրսէն ըմբոստութեան գրգռումներ չըլլան, հարկ կը տեսնուի ուսիկանական հսկողութեան տակ առնել վարժարանը: Լնդհանուր կարծիքն այն է որ նոյն և ուրիշ թաղերու մէջ առաջ եկած խառնակութեանց միակ պատախանատուն անո՛նք են որ խնդիրը կը ձգձգեն, ամէն կողմ սիրաշահելու համար.

ՈՐԲԱԽՆԱՄ ՅԱՆՁՆԱԺՈԺՈՎՆ այս չաբթու 400 ոսկի զրկեց Տէօրթ Եօլի և Հասան Պէլլի որանոցներուն համար Տ. Փառէն վրդ.ի, 200 ոսկի Մարաշ և 200 Այնթապ: Այս գումարները վճարուեցան նախկին նպաստի մնացորդներէն. պետական նոր նպաստէն ո և է գումար չէ ծախսուած:

ԹԻՖԼԻՍԻ հոգեւոր ատեաններու քըննիչ Տ. Մատթէոս վրդ. Սեպտ. Յին Ա. խըլցիսա գացած է, քննելու համար տեղւոյն հոգեւոր ատեաններու գործերը:

ՊԱՏՐԻԱՐԷԱԿԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ ՄԸ
Վ Տ Ա Ն Գ Ի Տ Ա Կ

Թերթերու ներքին Լուրերու բաժնին մէջ հրատարակուած զեկոյցի մը մէջ կը յայտարարէ թէ՛ այսուհետև ֆէրադի և ինքիզադի իլմուխապէրները փոխանակ Պատրիարքարաններէն բերուելու, ուղղակի թաղերուն Ծերոց Ժողովներէն (Իխիյար

Մեհլիսի) պիտի բերուին, ինչպէս կ'ըլլայ գաւառներու մէջ: Եթէ վերջնական հանգամանք առնէ այս որոշումը, մեծ հարուած մ'է Պատրիարքարաններու բարոյական հեղինակութեան և անոնց նիւթակաշին: Պոլսահայոց օրինաւոր ճիւղահամարը Պատրիարքարանի ձեռքը կը գտնուի, և ա՛յն կրնայ որոշել թէ մեռնողի մը կառուածական ստացուածքը ի՞նչպէս պէտք է բաժնել, ո՞վ է բուն ժառանգորդը, որո՞նք ողջ են և որո՞նք մեռած, մանաւանդ ո՞վ է օրինաւոր զաւակը: Եթէ հուզուի Պատրիարքարաններուն դիմել, հարկ կ'ըլլայ դիմել Մուխթարներու, որոնց մեծագոյն մասին վիճակը և անցեալը յայտնի է, Իխիյար Մեհլիսիներու՝ որոնց գոյութենէն իսկ անտեղեակ է ժողովուրդը, և որոնք բնականաբար ո և է արձանագրութիւն ալ չունին: Այս պարագային յայտնի է թէ՛ ո՞րքան հազար կնճիռներ յառաջ պիտի գան ապագային, և ո՞վ գիտէ ո՞րքան խոշոր դատերու ծնունդ պիտի տրուի, մեծ վնասներու մատնելով ժողովուրդը: Ասկէ զատ, նիւթական ալ մեծ վնաս յառաջ պիտի գայ Պատրիարքարանին որ տարեկան իբր ազգային տուրք և այլ ծախքեր մօտ 3000 ոսկի հասոյթ մը կը գանձէ այդ աւթիւ: Ինչ որ եկամուտին գլխաւոր աղբիւրն է: Հետեւապէս, ապահով ենք թէ Պատրիարք և Վարչութիւն լրջօրէն ձեռք պիտի առնեն խնդիրը և հարկ եղած դիմումը պիտի ընեն նախարարութեան մօտ, առիթ չտալու համար Պատրիարքարանի արդէն իսկ ունեցած մէկ իրաւունքին ջնջուելուն:

*** Վերջին պահուն թերթերու մէջ կը կարդանք թէ Տնտես. Խորհուրդը ձեռք առած է խնդիրը, և Բաղաք. Ժողովին ուշադրութեան ներկայացուցած:

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՀՄԱՅՆԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԷՋԻՐՈՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զաֆաֆճլար, Յակոբեան խան

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

1911-1912

1911-1912

1911-1912

1911-1912

1911-1912

1911-1912

1911-1912

1911-1912

1911-1912


1911-1912

1911-1912

1911-1912

1911-1912

1911-1912



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԸԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ . — ԿՐՈՆԻ Դա-
սեր, Բրիտանական եկեղեցւոյ վարդապե-
տութիւնը: Գին 5 ղրշ .:

ՆՈՅՆ . — ԿՐՈՆԻ դասեր, Բրիտանական
քարոյականը: Գին 5 ղրշ .:

Տաղանդաւոր հեղինակը, երկրորդական
վարժարաններու և բարձրագոյն կարգերու
համար ֆրանս. լաւագոյն հեղինակներու
հետեւողութեամբ, և Հայ եկեղեցւոյ վար-
դապետութեանց համաձայն պատրաստած
է այն երկու հատոր դասագիրքերը կրօ-
նական և բարոյական ուսմանց, որոնք ի-
րենց ամփոփ ձեւին տակ այնքան լաւ կեր-
պով կը խտացնեն քրիստոնէական բարոյա-
կանն և եկեղեցական վարդապետութիւն-
ները, ցարդ հրատարակուած դասագիրքե-
րուն մէջ լաւագոյն տեղ մը գրաւելով:
Ջերմապէս կը յանձնարարուի կրթական
վարիչներուն: Երկու գործերն ալ վաւե-
րացած են Ազգ. Կեդր. Վարչութեան
Կրօն. Ժողովէն:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ . — Գանձարան, ըն-
թերցանութեան գիրք, տարրական դա-
սընթացք, 5 ղրշ .:

Նոյն, միջին դասընթացք, Գ. տպա-
գրութիւն, 8 ղրշ .:

Ծանօթ գրող Արամ էֆ. Անտոնեանի
սոյն ընթերցանութեան գիրքերը, ճաշա-
կաւոր և գիտակից ընտրութեամբ եղած
քաղուածներ՝ Հայ և օտար լաւագոյն հե-
ղինակներէ, կը յանձնարարուին դպրոցա-
կան վարիչներուն, իրենց մաքուր տպա-
գրութեամբ (Օ. Արզուման) և այն մեթո-
տիկ ուղղութեամբ որ Գանձարանի առանձ-
նայատուկ առաւելութիւնն եղած է, և
ապահոված է անոր յաջողութիւնը: 5—2

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

(Վկայեալ Կայսերական թշկական վարժարանէն)
Պէշկիրաշ, Հայոց եկեղեցիին ճիշդ դիմացը:

Կը դարմանէ ակույի եւ լինտերու
ամէն տեսակ հիւանդութիւններ. կը շինէ
քնականին յար եւ նման ակուաներ ֆաու-
շուի կամ ոսկի փշաֆի վրայ: Չափէն աւելի
փտած ակուաները ֆուռոնէ կ'ընէ. կը շինէ
նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ
թոսարլենէ:

Հիւանդ կ'ընդունի ամէն երեկոյ ժամը
12էն մինչեւ 3 (Ը. Թ.): Ուրիշ ատեններ՝
մասնաւոր ժամադրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Վիեննական Հայրերու հմտալից հրա-
տարակութիւն, նուիրուած Հայ բանասի-
րութեան, Հայ պատմութեան, և ին. քըն-
նական ուսումնասիրութեան: Ներկայ տա-
րեչը շնորհիւ հոգ տարուած է մասնաւորա-
պէս ժողովրդային պահանջներու ալ գոհա-
ցում տալու: Տարեկան բաժնեգին՝ 15 ֆր.
կամ 6 ռբ.: Մէկ թիւ 1.50 ֆր.: Հասցէ՝
Rédaction de la Revue «Handess Am-
sorya» VIENNE VII/2, Mechitharisten-
gasse 4.

Հրատարակուեցաւ Հոկտեմբերի թիւը:

ԱՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՅԳԱԼՈՅՍ, Արշակունի
Օրիորդին Արկածները. գրեց Մեսրոպ Վ.
Ուղուրլեան. — Վիպասանութիւն հմտալից
տեղեկութիւններով, և հետաքրքրալարժ
ու մերթ զուարճալի պարունակութեամբ,
գնահատուած Հայ-հռոմէականաց նախորդ
Կ. Պատրիարք Տ. Պօղոս-Պետրոս ԺԱ.է:
Գին 20 ղրշ .: